# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Արարատի մարզի
Ավշար համայնք, գյուղ Ավշար Անդրանիկի 1
Հեռախոս՝ 4-21-79

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 18» դեկտեմբերի 2012թվականի N 17- Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածների , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.
Հաստատել համայնքի տարածքում 2013թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտա-րապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
հիմնական օբյեկտների համար՝
1/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:
2/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
ա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:
բ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 7000 դրամ:
գ/ 1001- ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 10000 դրամ:
Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար
դ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների տեղական տուրքը սահմանվում է 1500 դրամ:
ե/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
1/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության համար տեղական տուրքը սահմանվում է 1500 դրամ.
2/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինության համար սույն հոդվածի 1-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Արարատի մարզի
Ավշար համայնք, գյուղ Ավշար Անդրանիկի 1
Հեռախոս՝ 4-21-79

# ՈՐՈՇՈՒՄ

« 18» դեկտեմբերի 2012թվականի N 18 - Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 8 կետի, 27 հոդվածի, համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի ղեկավարի աշխատավարձի դրույքաչափը սահմանել 237000 /երկու հարյուր երեսունյոթ հազար/ դրամ:

կողմ /7/ դեմ /0/ ձեռնպահ /0/

ՍՈՒՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ԲՈՒԴՈՒՄՅԱՆ ՄԱՅԻՍ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆՎԵՐ

ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԻՐԶՈՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Արարատի մարզի
Ավշար համայնք, գյուղ Ավշար Անդրանիկի 1
Հեռախոս՝ 4-21-79

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 18» դեկտեմբերի 2012թվականի N 19 - Ա

### ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ,ՄՇԱԿՈՒԹԱՅԻ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ,ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16 -րդ հոդվածի 26 կետի, 32-րդ հոդվածի 5-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել գյուղապետարանի աշխատակազմիաշխատակիցների թվաքանակը 21, մշակութային և ընդհանուր սպասարկման բյուջետային հիմնարկի աշխատակիցների թվաքանակը 27, մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը 20 , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափը |
|---|---|---|
| *Հայեցողական պաշտոններ* | | |
| Համայնիք ղեկավարի տեղակալ | 1 | 143000 |
| Համայնիք ղեկավարի օգնական | 1 | 132000 |
| Համայնիք ղեկավարի խորհրդական | 1 | 132000 |
| *Համայնքային ծառայության պաշտոններ* | | |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար /1.2/ | 1 | 144000 |
| Համայնիք ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3/ | 1 | 143000 |
| Համայնիք ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1/ | 2 | 126000 |
| Համայնիք ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2/ | 2 | 124000 |
| Համայնիք ղեկավարի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3/ | 2 | 97000 |
| ***Տեխսպասարկման անձնակազմ*** | | |
| Գործավար | 1 | 80000 |
| Հասարակական կարգի պահապան | 8 | 86000 |
| Վարորդ | 1 | 91000 |
| *Պահակ* | 2 | 51000 |

1. մշակութային և ընդհանուր սպասարկման բյուջետային հիմնարկ.

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափը |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 138000 |
| Տեղակալ | 1 | 114000 |
| Հաշվապահ | 1 | 114000 |

| | | |
|---|---|---|
| Համակարգչի օպերատոր | 1 | 74000 |
| Կուլտուրայի տան վարիչ | 1 | 74000 |
| Գեղմասվար | 1 | 63000 |
| Գրադարանի վարիչ | 1 | 63000 |
| Գրադանավար | 1 | 51000 |
| Խմելու ջրի վարձի հավաքագրող | 3 | 103000 |
| Խմելու ջրագծի սպասարկող | 1 | 74000 |
| Կատարածու | 1 | 74000 |
| Տեխնիկ -- փականագործ | 1 | 68000 |
| Շախմատի մարզիչ | 1 | 63000 |
| Պարուսույց | 2 | 63000 |
| Ըմբշամարտի մարզիչ | 1 | 86000 |
| Ռիթմիկ մարմնամարզության մարզիչ | 1 | 63000 |
| էլեկտրիկ | 1 | 63000 |
| Գերեզմանոցի պահակ | 1 | 57000 |
| Այգեպան | 0,5 | 60000 |
| Հավաքարար | 3 | 53000 |
| Զուգարանի հավաքարար | 1 | 53000 |
| Հրապարակի հավաքարար | 1 | 53000 |
| Տեխսպասարկող բանվոր | 1 | 51000 |
| ֆուտբոլի դաշտի պահակ | 1 | 47000 |
| Կենցաղի ջրի վարձի հավաքագրող | 1 | 47000 |

1.մանկապարտեզ.

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափը |
|---|---|---|
| Վարիչ | 1 | 95000 |
| Դաստիարակ | 3,75 | 94000 |
| Դաստիարակ երաժիշտ | 0.75 | 94000 |
| Հաշվապահ | 1 | 74000 |
| Բուժքույր | 1 | 57000 |
| Տնտեսվար | 0,5 | 90000 |
| Խոհարար | 1 | 60000 |
| Խոհարարի օգնական | 0.5 | 60000 |
| Լվացք անող | 0,75 | 54000 |
| Դաստիարակի օգնական | 3 | 57000 |
| Դռնապահ | 1 | 47000 |
| Պահակ | 2 | 47000 |

կողմ /7/ դեմ /0/ ձեռնպահ /0/

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ԲՈՒԴՈՒՄՅԱՆ ՄԱՅԻՍ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆՎԵՐ

ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԻՐԶՈՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ